ԳԻՒՂԱՑՈՒ ԱՂՕԹՔԸ.

Քո Աջովն ենք, Տէր մենք ապրում,
Թէև մերերն են աշխատում.
Դու ես երկիրն բերրի դարձնում,
Իսկ մենք դուշտից տուն ժողովում։
Ամեն ինչ Քեզ փառք է կարդում,
Բայց մենք յայտնի չե՞նք տեսնում,
Որ Դու միայն ունկն ես դնում,
Երբ գործող ձեռքն է փառք կարդում։
Երկրի, երկնի Դու կառավար
Հացով խնամէ մեզ հայրաբար.
Առատութիւն ընդոց մեզ տուր,
Մեր ջանք, քրտինք, թող չլնեն զուր։
Երբ Քո հրաման կգայ բարձրից—
Շուտ հեռանալ մեզ այս երկրից,
Թող մեզ հանդչէլ, Հայր, Քո գոգում
Քեզ փառաբերել և Երկնքում։

Պանդո-ֆ.

ԱԶԳԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՃԵՄԱՐԱՆԻ.

Գերապատիւ Սրբազան Տեարք.

Այս հանդիսաւոր ժամիս, մինչ խմբուած ենք Ճեմարանիս բացման 11-երդ տարեդարձը տօնելու, պարտք եմ համարում համառօտակի տեղեկութիւն տալ Ձեզ, Մեծարու հանդիսականք, հաստատութեանս $18^{84}/_{85}$ ուսումնական շրջանի մասին։

Խօսքս չեմ երկարացնել Ճեմարանիս ուղղութեան, նպատակի և ծրագրի մասին, որովհետև յայտնի են. Ճեմարանիս ուղղութիւնն է և պէտք է լինի հոգևոր, նպատակը՝ տալ ազգին հայագէտ և կրօնագէտ կուսակրօն հոգևորականներ, քահանաներ և ուսուցիչներ։ Այս ուղղութեան և նպատակին յարմարեցրած է ուսման ծրագիրը, որ արդէն հրատարակեալ լինելով «Արարատ» ամսագրի մէջ և առանձին տետրակով՝ այստեղ հարկ չեմ համարում երկրորդել։